ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« 11 » նոյեմբերի *2010թ*

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 125

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Գլոբալ էկոլոգիական ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» N 00059937 ծրագրի արդյունավետությունն ապահովելու նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Ստեղծել «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման գործընթացին աջակցող միջգերատեսչական մշտական գործող աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Ա.Հակոբյան	- ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ *(աշխատանքային խմբի ղեկավար)*
Ս.Սրապյան	- ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային ապահովման, բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ քաղաքականության վարչության բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ բաժնի պետ
Օ.Կարապետյան	- ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի գիտատեխնիկական քաղաքականության վարչության տեխնիկական նորմավորման և ստանդարտացման բաժնի պետ
Հ.Ծուղունյան	- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի զարգացման վարչության էներգախնայողության և տեխնիկական նորմատիվների բաժնի պետ
Մ.Ծառուկյան	- ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի շրջակա միջավայրի պահպանության վարչության հողերի և մթնոլորտի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ
Ա.Եգանյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի զբոսաշրջության և տարածքային տնտեսական զարգացման վարչության տարածքային

	տնտեսական զարգացման բաժնի պետ
Գ.Մինասյան	-ՀՀ շինարարների միության տնօրեն (համաձայնությամբ)
Ե.Վարդանյան	- Երևանի Ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ռեկտորի աշխատակազմի ղեկավար (համաձայնությամբ)
Հ.Եսայան	- Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի իրականացման և մոնիտորինգի համակարգող (համաձայնությամբ)
Հ.Աբրահամյան	- «Գլենդել Հիլզ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Ա.Կարապետյան	- «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրի շինարարական նորմերի ու ստանդարտների գծով փորձագետ (քարտուղար) (համաձայնությամբ)

2. Հաստատել «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման գործընթացին աջակցող միջգերատեսչական մշտական գործող աշխատանքային խմբի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել աշխատանքային խմբի ղեկավարին՝ 3 ամսյա պարբերականությամբ ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ:

Նախարար

Վ.Վարդանյան

11 նոյեմբերի 2010թ.
ք.Երևան

Հավելված
ՀՀ քաղաքաշինության նախարարի

2010 թվականի նոյեմբերի 11-ի

N 125 հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՇԵՆՔԵՐԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է ՄԱԶԾ-ԳԷՖ-00059937 «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված աշխատանքների իրականացման գործընթացին աջակցելու մշտական գործող աշխատանքային խմբի (այսուհետ՝ աշխատանքային խումբ) գործունեության կարգը:

2. Աշխատանքային խմբի կողմից իրականացվող աշխատանքները պետք է համահունչ լինեն Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի կատարմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության գործողությունների և գործող քաղաքաշինական նորմերը եվրոպական ստանդարտներին համապատասխանեցման ծրագրերին:

3. Աշխատանքային խմբի հիմնական նպատակը՝ Ծրագրի արդյունավետ իրականացմանն աջակցելն է:

II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

4. Աշխատանքային խումբն իր գործունեությունը ծավալում է ինչպես ժամանակակից էներգաարդյունավետ շինարարական տեխնոլոգիաների և շինանյութերի կիրառման համար համապատասխան շինարարական նորմերի և կանոնների մշակման ու դրանց պարտադիր կիրարկման համար խթանիչ միջավայրի ձևավորման, այնպես էլ էներգաարդյունավետ շենքերի նախագծման սկզբունքները շինարարական ոլորտում ներկայացնելու համար (շենքերի նախագծման փուլից մինչև կառուցումն ու շահագործումը) մասնագիտական հմտությունների և ունակությունների ստեղծմանն աջակցելու ուղղությամբ:

5. Աշխատանքային խմբի խնդիրներն են՝

1) էներգաարդյունավետ նոր նորմերի և ստանդարտների ներմուծման հնարավորությունների և խոչընդոտների հաղթահարման ուղղությամբ ներկայացված առաջարկությունների քննարկում և խորհրդատվության տրամադրում.

2) մշակման, վերանայման կամ տեղայնացման ենթակա շինարարական նորմերի ու ստանդարտների ցանկի և ժամանակացույցի քննարկում.

3) ծրագրի շրջանակներում միջազգային և ազգային փորձագետների կողմից մշակված/լրամշակված շինարարական նորմերի և/կամ ստանդարտների նախագծերի քննարկում ու առաջարկությունների ներկայացում.

4) շինարարական նորմերի և ստանդարտների կիրարկման և վերահսկման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում.

5) էներգաարդյունավետ ցուցադրական բազմաբնակարան շենքի նախագծման, կառուցման գործընթացի քննարկում, ինչպես նաև աշխատանքների որակի վերահսկողության և շահագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

6. Ծրագրի հետագա փուլերում նախատեսվող և պլանավորվող գործողությունների շրջանակների հստակեցման համար Աշխատանքային խումբը կարող է նաև քննարկել և խորհրդատվություն տրամադրել հետևյալ ուղղություններով՝

1) Էներգաարդյունավետ շինարարական նյութերի, տեխնոլոգիաների վերաբերյալ ուսուցման և ցուցահանդեսների կազմակերպման, գովազդային նյութերի մշակման և իրազեկության բարձրացման.

2) Էներգաարդյունավետ շենքերի նախագծման և էներգետիկ աուդիտի ընթացակարգերի վերաբերյալ ուսուցման և վերապատրաստման նպատակային դասընթացների կազմակերպման.

3) էներգաարդյունավետ նյութերի հավաստագրման և պիտակավորման բնագավառում անկախ ստուգողների արտոնագրման ընթացակարգերի մշակման:

III. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Աշխատանքային խումբն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության:

8. Աշխատանքային խմբի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է աշխատանքային խմբի անդամների պարզ մեծամասնությունը:

9. Աշխատանքային խմբի նիստերը վարում է աշխատանքային խմբի ղեկավարը, իսկ ղեկավարի բացակայության դեպքում՝ խմբի անդամներից մեկը աշխատանքային խմբի ղեկավարի առաջարկությամբ:

10. Աշխատանքային խմբի օրակարգը հաստատվում է աշխատանքային խմբի որոշմամբ: Աշխատանքային խմբի քարտուղարը նիստերի հրավիրման, դրանց տեղի և ժամանակի մասին նիստի օրվանից ոչ ուշ, քան 2 օր առաջ տեղեկացնում է աշխատանքային խմբի անդամներին՝ նրանց տրամադրելով նիստի օրակարգն ու քննարկվելիք հարցերին վերաբերվող համապատասխան նյութերը:

11. Աշխատանքային խմբի որոշումները որոշում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում աշխատանքային խմբի ղեկավարի ձայնը որոշիչ է: Աշխատանքային խմբի որոշումները ձևակերպվում են արձանագրությամբ և արձանագրությունները ստորագրում են աշխատանքային խմբի նիստին ներկա բոլոր անդամները:

12. Հատուկ կարծիքի առկայության դեպքում այն գրավոր ներկայացվում է աշխատանքային խմբի ղեկավարին և կցվում է արձանագրությանը:

13. Աշխատանքային խմբի նիստերին առանձին դեպքերում կարող են հրավիրվել շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

14. Աշխատանքային խումբը հաշվետու է ՀՀ քաղաքաշինության նախարարին:

VI. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

15. Աշխատանքային խմբի գործունեության իրականացման հետ կապված տեխնիկական և կազմակերպչական աշխատանքները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի, ինչպես նաև ՄԱԶԾ-ԳԷՖ «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրի աշխատակազմի միջոցով:

VII. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

16. Աշխատանքային խմբի գործունեությունը դադարում է ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանով: